

Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌԱՇՆԵՐ

ԵՐԲԵՄԻ ԳԷԶ ԲԱՆՈՒՄԸ տեսնելով մարդ՝ տւելի օգուտ կը քաղէ՝ քան թէ բարի օրինակէն . շատ լաւ բան է որ վարժի մարդ նաև գէշէն իրեն օգուտ մը հանել, ինչու որ գէշեր խիստ շատ, իսկ բարիք՝ շատ քիչ են ու ցանցաւ :

ԲԱՍԳԱՆ

ՊԵՏԻ Է ցաւակից ըլլալ այն խեղճերուն որ կը մոլորին, չէ թէ անծեւ : Այս աշխարհքս մէկ բան մը միայն կրնանք ասել, զԱտեւութիւնը :

ԳՈՍԻՒՒՒ

ՆԱՅԷ որ քու սրտիդ խաղաղութիւնը մարդկանց լեզուներուն վրայ չդնես . թէ բարի մեկներ են քու գործքդ թէ գէշ, դու անանկով ուրիշ մարդ մը չես ըլլար :

Թէ որ լաւ յատկութիւն մը վրագ տեսնելու ըլլաս՝ միտքդ դիր որ ուրիշները շատ աւելին ունին : Զ քեզ այս կերպով ուրիշներէն վար սեպելովդ բնաւ վնաս մը չես քաշեր, բայց մեծապէս կը վնասուիս՝ թէ որ միայն մէկ հոգիէ մ'ալ զքեզ վեր սեպելու ըլլաս : Խոնարհին սիրտը մշտնջէն նաւոր խաղաղութեան մէջ է . իսկ հպարտին սիրտը՝ նախանձով ու բարկութեամբ միշտ կը ծփայ :

ԳԵՐՍՈՒՄ

ՈՂԻՆԷ և ԻՆԷ :

Թէ յօրինեմ երգ յՈՂԻՆԷ
Ապա ուրեմն գործեմ ԻՆԷ .
Յաճախ 'ի միտքս կայ ՈՂԻՆԷ,
Սակայն և յայնժամ գրրի ԻՆԷ :
Զայլոց չասէ մարդ և ՈՂԻՆԷ
Եթէ իցէ գիտելոյ ԻՆԷ,
Փառք և պարտաւ են ինձ ՈՂԻՆԷ
Այլ հանապազ խորհիմ ես ԻՆԷ :
Տես զօրինակ . չարժէ ՈՂԻՆԷ
Որ գայ յանկարծ յՈՂԻՆԷ՛՛՛ յԻՆԷ .
Զի մին առնէ յԻՆԷ՛՛՛ ՈՂԻՆԷ,
Միւսն յՈՂԻՆԷ՛՛՛ վաղ գործէ ԻՆԷ :
Մարդոյ յաճախ չիք խէթ ՈՂԻՆԷ :

Լինի և լաւ չունելով ԻՆԷ .
Աստուած զաշխարհս ետեղծ յՈՂԻՆԷ .
Համարիցիս գու լինել ԻՆԷ :
Աղքատ իսկ ես, ունիս ՈՂԻՆԷ
Եւ ոչ ոք քեզ ընձեռէ ԻՆԷ .
Իսկ թէ կարօտ չես առ ՈՂԻՆԷ
Աշխարհս ամէն քեզ շնորհէ ԻՆԷ :
Ի մրտերմաց յուսա՛ ՈՂԻՆԷ,
Եւ տես քեզէն յաւելուլ ԻՆԷ :
Ես համարիմ զոսկի յՈՂԻՆԷ,
Բայց գիտութիւնք իցեն առ ԻՆԷ :
Որ զայլն ամէն գրրէ յՈՂԻՆԷ,
Եւ զուղղութիւնս համարի ԻՆԷ .
Զըցաւէ նմա եւ ընդ ՈՂԻՆԷ .
Յոգւոյ նորա բարբառի ԻՆԷ :
Զարեաւ՝ գործես աստ եւ ՈՂԻՆԷ,
Այլ արգարով գործիցես ԻՆԷ :
Լիցիս երբեմն աստէն ՈՂԻՆԷ,
Անդէն յուսամ թէ լինիս ԻՆԷ :

ԳՐԵՏՐԻԿ ԳԱՍԴԷԼԼԻ

Թարգմանեալ 'ի գերմանականէն :

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Հ-ԳԵԼ ԴԻՄԻԹ ԵՄԷԼ ԿՈՒՄԵՆԷԼ ԻՆԷ :

ՏԱՐԻՈՑԻ Եղանակին տաք օրերուն մէջ ձուկը առաւօտէն մինչև իրիկուն կրնայ հոտիլ . որն որ բոլորովին հոտած չըլլալով թէպէտ առողջութեան վնասակար չէ, բայց ծանրացած ըլլալով նետելու կը հարկաւորիս : — Աս անախորժ համը և գէշ հոտը ձկան վրայէն վերցնելու համար, որ ինչպէս յայտնի է՝ տարւոյն տաք եղանակներուն մէջ շատ անգամ կը պատահի, շատեկ ջուրի մէջ խաշէ զձուկը, մէջը դնելով ջրին մէկ քառորդին չափ քաջախ և աղ, ու մէկ կտաւէ քսակի մէջ ածուխի փոշի լեցուցած ջրին մէջ կտիս : Քսակը շատ կամ քիչ մեծ պիտի ըլլայ համեմատութեամբ ձկան շատութեանը : Աս կերպով ձկան անախորժ համը բոլորովին կ'երթայ :

Այս կերպով ծանրացած միսն ալ կրնայ ազել . նալ : Ածուխի փոշուով քսակին տեղ կրնայ մէկը քանի մը կտոր կրակ, այսինքն վստած ածուխ ձրգէլ ջրոյն մէջ :